

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ ԹԻ 42 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթը (Խմբագրական)Ց. Ա. — «Անհրաժեշտ դարձանք» երրորդին ԶԱՎՈՒՇԵԱՆ. — Մտքի կա-
րիւնք. ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ. — Գրախօսական. Ս. ԱՆԳԵՂԵԱՅ. — Բարեբու ուսումնասիրու-
թիւն. ԲՐԻԶԱՆԹԷՄ. — Ծաղիկները (Բանաստեղծութիւն) ԺԱԴ ՆՈՐՄԱՆ. քարգմ. ՓԱՅԼԱԿ,
— Ամուսնութիւնները Ամերիկայի Հայոց մէջ. ԽՈՍՐՈՎ. ԳԵՇԻՇԵԱՆ. — Լիլիեմ Մօրրիս (Վեպ)
ՀԵՆՐԻԲ ՍԷՆԲԻԷՎԻԶ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառսուն դրո.
եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ֆրանկ կամ
1 լիւլի: Թղթաստանի ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւնը 5 լիւլի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
Խմբագրակ կ'ելլէ ամեն շաբաթ անսու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առար.
կութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայ-
մաններով:

Զեմ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (مابيس) غزته سی اداره سی

ԽՐԲՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս, Հալափա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդրօյից ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա-
մար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հան-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարի-
գի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւ այլն թաղրոնները, Նաեւ
Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թաղրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի,
Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հաւր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց,
Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշագրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկե-
րութիւնը, իր կազմական կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ
մը իր ելմտական կազութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քըն-
նութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ
իր պատուաւորութեա իբր ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագ-
րութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie
générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գոր-
ծակալութիւնը:

Հասցէ. — Պոլիս, Մահուտ փաշա, Պէոյիւք Եըլտըզ խան, թիւ 14, Լա Դօնֆրանս տ-
պահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող ան-
քիֆաի վաճառատուն մը, Պոլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն
առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

ԿԵՆԱՑ ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԻՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիւներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՞ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբուրթիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ ռախաբածիւններու բարգում (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեքամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամաստուգն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասմաթ Քաթրքը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լինայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ Վիսաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Յերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան աքառքան

Պալպալեան ամէն օր աղաւթի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած աղաւթները: Ճորեկները աղաւթ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'ախեալ է:

Ազգասերուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեւակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւազաններ եւայլն, դիմեցէք Պոլիս, Ոսկերչաց Ծուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ព្រះ ឈ្មោះ ឈ្មោះ ឈ្មោះ



ՄԱՍԻՆ

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 42

17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903

ՇԱՐԽԱՐԻՉ

Ռուսմանիոյ Հայերը որոնք,—գետ քանի մը օր առաջ Պուքրէշէն հասած նամակի մը նայելով,—անձկութեամբ կը սպասէին Արշարունի Տ. Յովհաննէս եպիսկոպոսին երթալուն, նոր յուսախաբութիւն մը պիտի կրեն՝ իմանալով որ Պրուսայի առաջնորդը հրաժարեր է ստանձնելէ իրեն առաջարկուած այցելու հովուի առժամեայ պաշտօնը: Բարեբաղդաբար այդ յուսախաբութիւնը հետք մը չպիտի թողու իրենց վրայ, վասնզի միեւնոյն ատեն պիտի տեղեկանան թէ Կեղք. Վարչութիւնը Ասլանեան Տ. Ներսէս եպիսկոպոսը հրաւիրեր է այդ հովուական այցելութեան որուն հարեւորութիւնը բացատրելը՝ կրկնութիւն մը պիտի ըլլար տարիներէ ի վեր գրուածներուն: Ասլանեան Սրբազան, իբրեւ կորովի կամքի տէր, անաչառ ու խստաբարոյ հոգեւորական, կատարելագէտ յարմար է կազմակերպելու Ռուսմանահայոց եկեղեցական ու դպրոցական խանգարուած գործերը, օրինաւորութեան ճամբու մը բերելու զեղծ քահանաներն ու մատակարարները, և իր անձով ու քարոզներով ներշնչելու տաք կրօնասիրութիւն մը՝ Մայրենի եկեղեցիէն պաղած կամ օտարանալու վրայ եղող անհատներուն: Եւ ինչպէս որ, Ռոսոսթայի առաջնորդը որ մայրաքաղաքս կը գտնուի, ինքն ալ չի հրաժարի—ինչ որ չենք կարծեր, ճանչնալով իր պատրաստակամութիւնը՝ իրեն առաջարկուած հոգեւոր պաշտօններուն ընդունելութեան. յետոյ, Վարչութիւնը անշուշտ իմացած է անոր արամադրութիւնը՝ սոյն որոշումը տալէ առաջ:

Այսպէս, երբ Ռուսմանահայոց այն մասը, —ստուար մեծամասնութիւնը,—որ Պատ-

րիարքարանի կողմէ նշանակուած արժանաւոր եպիսկոպոսի մը այցելութիւնը վայելելու իր բաղձանքին իրականացմանը կը մօտենայ, Իզմիրի հայ համայնքն ալ առաջնորդական ընտրութեան նախաքայլը առնելու դիւրութեամբ կ'օժտուի. վասնզի, ինչպէս օրաթերթերը ծանուցին, իսառն ժողովը պաշտօն յանձնէր է Երզնկայի հրաժարեալ առաջնորդ Տ. Դանիէլ վարդապետին՝ Իզմիր երթալ, գաւառային ժողովին կազմակերպութիւնը լրացնելու և առաջնորդի ընտրութիւն կատարել տալու համար: Անկեղծապէս խօսելով, վարչական այս որոշումը անակնկալ մը պիտի ըլլայ՝ Իզմիրի ազգայիններէն աւելի այն քանի մը վարդապետներուն որոնք ուղղակի կամ անուղղակի թեկնածուներ էին երթալ բաղմնելու, գէթ առժամապէս, Մեղքիսեդէկ Սրբազանի մահուամբ թափուր մնացած առաջնորդական աթոռը, Փոխանորդի կամ Տեղապահի տիտղոսով: Վարչութիւնը, ո՛չ Տեղապահ կարգեց ո՛չ Փոխանորդ, ու ժողովներու կազմակերպութեան և առաջնորդական ընտրութեան նախադասելու գործն ալ յանձնեց գաւառայի պարզուկ վարդապետի մը որուն մտքէն չանցնիր ընտրելի ըլլալ, և հետեւաբար ինքնամիտի ու չեղոք կերպով պիտի աշխատի կատարել իրեն յանձնուած պաշտօնը:

Վարչական որոշումներու գլուխը գտնուող այս երկու անուանումներէն դուրս, շարժական կարեւորագոյն լուրն է Ռուսմանահայոց մը մեծկակ մէկ նուիրատուութիւնը՝ Ազգ. Պատրիարքարանին, կրթական նպատակներու յատկանալի:—«Նախիջեւանցի բարի ծերունի մը, Պ. Յովհաննէս Աճէմեան, 100էն 120

հազար բուլլիի չափ իր հարստութիւնը (10,000էն 12,000 անգլ. ոսկի) կը թողու Սզգ. Պատրիարքարանի տրամադրութեան ներքեւ Անգլիոյ Պանքային մէջ, եկամուտը գործածուելու համար դպրոցներու: Սոյն կտակը ասկէ առաջ Նախիջեւանի դպրոցներուն համար ըրած էր, բայց 1903 յունիսի նոր կարգադրութեանց բերմամբ՝ նախամեծար համարեր է այլապէս տնօրինել, և այդ գումարը Լոնտոն ղրկելով, հասոյթը յատկացնել Պատրիարքարանի ձեռամբ մատակարարուող դպրոցներուն»:—Այս բարեգործական կտակին կամ նուիրատուութեան լուրը ինքնին այնքան խօսուին է, որ զայն խորհրդածութիւններով պնէնք՝ տկարացնել պիտի ըլլար անոր առոյգ գեղեցկութիւնը:

Թէև Շարաթական Տեսութեան հետ վերաբերութիւն չունեցող խնդիր մը, որ տարիննրու ընթացքին մէջ քրքրուած է, —պարբերաբար այժմէութիւն առնելով ու միշտ անհետեւանք մնալով, —արհեստական կըրթութեան կամ բուն բառովը՝ Պոլսահայոց յատուկ արհեստից վարժարանի մը հաստատման խնդիրն է զոր անգամ մըն ալ հրապարակ կը դնէ մեր մասնադէտ աշխատակիցը Երուանդ էֆ. Չափուշեան. Մասիսի ներկայ թիւին մէջ, իրեն հիմ բռնելով իէթէոս էֆ. Պէրպէրեանի մէկ տեսութիւնը նոյն նիւթին վրայ: Ահա՛ երկու գրուածքներ որոնք գործնական արդիւնքի մը յանգելու ամէն հանգամանք կը կրեն, եթէ արդարեւ այդ նպատակով բան մը ընելու տրամադրութիւն ունին մեր կրթական գործին վարիչները՝ Պատրիարքարանի հովանաւորութեան ներքեւ՝ և մեր հարուստներն ալ այդ տեսակ հանրագումար ձեռնարկութեան մը նպաստելու յօժարութիւն: Մեր աշխատակիցը, իր կարծ գրուածքին մէջ, դրական ու հետաքրքրաշարժ յայտնութիւններ կ'ընէ, պատմելով թէ անհատի մը կողմէ իրեն գիմում եղած է արդէն՝ արհեստական դպրոցի մը կազմակերպութեան ծրագիր և ծախքի ենթադրական հաշիւ խնդրելով, զորս փութացեր է պատրաստել և յանձնել: Ու կ'աւելցնէ թէ այդ անձը հաւանութիւնը ստացած էր արդէն քանի մ

հարուստներու որոնք այս տեսակ հանրագումար հիմնարկութեան մը գաղափարն ընդգրկած էին, զայն գործադրութեան դնելու փափագով: Ահա՛ բարի տրամադրութիւն մը ուսկից կարելի է օգտուիլ:

Տ. Ա.

ԾԱՆԹԱՆԵՐԸ

Ծաղիկները՝ ուր իրենց նոյն գոյներուն Քմայք կը ցուցադրեն,

Կրպակին մէջ ծաղկեպաճառ կրներուն՝ Մերք ուրախ, մերք իսուր են:

Ծաղիկները՝ ուրախ են երբ յողացան Բաւեր կ'երբ և մրմնջեն,

Յոյս, անեանք երջանկութիւն փսփսփան Սիրուած երու ականջեն:

Ծաղիկները՝ իսուր են, երբ զունաթափ Տեսում կ'երբան կը բռնմին,

Սփռելով վիշտ, այնուստիւն, խոց, սարսափ, Սառ մթութեան մէջ շիրմին:

Ծաղիկները՝ ուրախ են երբ հրապուրիչ Փայլով կուգ և խմբովին,

Սփռել պերճանք, հանոյք. անվոյթ խօս քրիչ Հանդեսներուն մէջ մեր սին:

Ծաղիկները՝ իսուր են, երբ ձմրան մօտ, Արցունքներով ողբով լի:

Կը բերեն մեզ յիշատակներ կսկրծոս Յիշատակներ սիրելի:

Ծաղիկները՝ այսպէս ըստ մեր բաղձանքին, Մասնակցելով մեր ամեն

Վիշտ ու խնկին, միշտ վկաներ մեր կեանքին և անբաժան փոքր են:

Թարգմ. ՓԱՅԼԱԿ

ՃԱԿ. ՆՕՐՄԱՆ

“ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԱՐՄԱՆԸ,”

Ռ. Էֆ. Պէրպէրեան վերջերս հրատարակեց(*) «Նախնական կրթութիւնը մեր մէջ» վերնագրով յօդուած մը՝ անանկ կարեւորութիւնն ունեցող հարց մը պարունակող որ պէտք չէր առանց նկատողութեան առնուելու մոռցուէր ուրիշ շատ մը գրուածքներու պէս:

Այդ տեսակ օգտակարը թելադրող գրութիւններ շատ քիչ անգամ երեւան կուգան: Ամէն անոնք, որ մեր կրթական գործերով կը հետաքրքրուին, պէտք է ուշի ուշով կարդան դայն և նկատողութեան առնեն անոր մէջ յայտնուած դադափարներն ու թելադրուած միջոցները: Պէրպէրեան Էֆ. իր բազմամեայ փորձառութեամբ կատարելագէտ համոզուած որ առհասարակ մեր թաղային վարժարանները, ինչ ծրագրով ալ օժտուած ըլլան, դարձեալ անբաւական են ընկերային արդի բազմազան պահանջներուն գոհացում տալ, անօգուտ ձեռնարկներով ժամովածառ չըլլալու համար անհրաժեշտ դարմանը ցոյց կուտար իր այդ յօդուածին մէջ, որպէս զի անոր վրայ լրջօրէն խորհելով կարեւորը միայն ի գործ դնենք:

Յարգելի յօդուածագիրը մեր վարժարաններուն ուսումնական ծրագիրը բաղդատութեան դնելով ամէնէն բարեկարգ նախակրթարաններ ունեցող հասարակութեանց կըրթական ծրագիրներուն հետ, անոր մէջ ու է պակաս մը չըլլալը հաստատելէ վերջ՝ շատ անիրաւ պահանջք մըն է, կ'ըսէ, «գործնական կեանքի ամբողջական պատրաստութիւնը» միայն մեր նախակրթարաններէն սպասելը: «Ո՛չ մէկ աղգի մէջ նախնական դպրոցներէն այդպիսի արդիւնք կը սպասուի, կը գրէ ան, այլ զանոնք ձեռք բերելու համար դեռ ուրիշ կրթական գործարաններ ու հաստատութիւններ ունին, որոնք մեզի կը պակսին, հետեւեալէս և անոնցմէ ստանալի բարիքները:»

Ասոքը շարունակելով, «Մեզի կարեւոր

(*) Սուրհանդակ օրաթերթի սեպտ. 23ի թիւին մէջ:

է, կ'ըսէ, ունենալ գէթ 2—3 հատ արհեստական դպրոցներ Պոլսոյ այլ և այլ կողմերը հաստատուած ու կարող վարպետներով և ուսուցիչներով օժտուած: Մեզի պէտք է ունենալ գոնէ մէկ հատ վաճառականական դպրոց: Այս է գործնականը. ծրագիրներ փոփոխելով ոչինչ կը շահուի: Թո՛ղ մեր գործնական ոգւով պարծող հարուստները երեւան գան, և թո՛ղ մեր թերթերն ալ լրջօրէն ու գործնականօրէն կարեւորը յղանան ու խրատեն»:

Կենսատու գեղագրի մը պէս հակիրճ բայց աղդու այս տողերը, որոնք նիւթական վիճակի բարեւաւան դարմանը կը խտայնեն իրենց մէջ, պէտք չէ որ անտես առնուին:

Այս անգամ երբ Պէրպէրեան Էֆէնտիի պէս սիրուած և կարեւոր անձնաւորութիւն մըն է որ կը մատնանչէ մեզ «մեծ պակասը», իրապէս ցաւալի կ'ըլլար եթէ դարձեալ անտարբեր գտնուէինք: Վարչական գործերու գլուխ գտնուող ձեռնհաս անձերուն համար՝ իրենց պատկանած համայնքին օգտակար ըլլալու գեղեցիկ առիթ մը աւասիկ:

Մասնագիտական ծրագրով մը ու «կարող վարպետներով և ուսուցիչներով» կազմակերպուած արհեստից վարժարանով մը օժտել Պոլսոյ մեր համայնքը, ի՛նչ մեծ ու նախաճանաչական բարիք մըն է ան, եթէ գիտցուի:

Կայսերական կառավարութիւնը միշտ հոգածու իր ժողովրդեան յառաջդիմութեանը, ամէն տեսակ դիւրութիւն պիտի չնորհէր մեզ, եթէ այդ տեսակ բարենպաստ ձեռնարկութեան մը համար ու է գլխում ընէինք:

«Թո՛ղ մեր գործնական ոգւով պարծող հարուստները երեւան գան»: Ահա հոս է խնդիրը: Առանց դրամի ոչինչ կարելի է ընել այս տեսակ պարագաներու մէջ: Մեր հարուստները մէկէ աւելի անգամներ գործնականապէս ցոյց տուած են թէ իրենք խուսափող չեն եղած, երբ օգտակար ձեռնարկութեան մը համար դրամ տալու հարկը ներկայացած է իրենց: Աչքի առջև շատ մը ապացոյցներ ունինք այս պարագան հաստատող: Ասկէ քանի մը ամիս առաջ Գառնգիւղի

ազգային մը, ինձ հետ ունեցած մէկ մասնաւոր տեսակցութեանը մէջ, յայտնեց թէ քանի մը հարուստներ, որոնց անունները չուզեց տալ, արհեստից վարժարան մը հիմնելու գաղափարը ունենալով, ինքը անոնց կողմէ եկած է՝ այդ մասին տեղեկութիւններ առնելու ինձմէ։ Աւելորդ է ըսել թէ, մեծ հաճոյքով կատարեցի այդ ազնիւ պարոնին խնդիրքը և արհեստից վարժարանի մը ընդհանուր մատակարարութեանը մասին պէտք ըլլալիք ծախուց քանակը մօտաւորապէս ճշգրտող տեղեկագիրք մըն ալ պատրաստելով, յանձնեցի իրեն որպէս զի այդ մասին տեղի ունենալիք խորհրդակցութիւնները քիչ շատ որոշ հիման մը վրայ կատարուին։

Յիշեալ անձը խոստացած էր ինձ այդ խորհրդակցութեանց արդիւնքը հաղորդել, բայց մինչև այսօր չկատարեց իր այդ խոստումը։ Այս պատճառաւ, չեմ գիտեր թէ ի՞նչ եղաւ արդեօք։ Բայց անիկա այնքան կարեւոր խնդիր մըն է և հանրային օգտին հետ այնքան սերտօրէն առնչութիւն ունի որ պէտք է ամէն բան երեւան ելլէ և հասկըցուի թէ, իրօք կա՞ն այդ տեսակ օգտակար գաղափար մը յղացող հարուստներ որոնք պատրաստականութիւն ցոյց տուած ըլլան արհեստից վարժարան մը հիմնելու համար պէտք եղած դրամը հաշթայթելու։

Այս պարագան երբ անգամ մը ճշդուի, այն ատեն պէտք է գործին բոլոր դժուարութիւնները անոնց վրայ ձգել։ Մեր հարուստները ամենքն ալ զբաղուած, գործի մարդիկ ըլլալով, պէտք եղածին չափ ժամանակ չունին վատնելու։ Եւ որպէս զի այս տեսակ դժուարութիւններու առջև անոնք չխորհելով ետ չկենան իրենց այդ ազնիւ գաղափարէն, պէտք է ամէն տեսակ բարոյական աշակցութիւն չինայուի իրենց՝ ձեռքն հաս անձերու կողմէ։ Իմ մասիս, սոսոր-տաս-երկու տարի է ի վեր Արհեստից կայսերական վարժարանին մէջ պաշտօնակա ըլլալով, մօտէն տեղեկակ այդ տեսակ դպրոցի մը ներքին և արտաքին ամէն տեսակ գործառնութեանց, կրնամ եթէ հարկ ըլլայ, շատ մը կարեւոր տեղեկութիւններ հաղորդել։ Ասկէ առաջ,

Ս. Յակոբայ արհեստանոցը քիչ մը կազմակերպելու մօտք ալ առաջարկութիւն մը ըրած էի Որբանոցի Խնամակալութեան, բայց կարեւորութիւն տուող չեղաւ այն ատեն և ես ամօթահար մնացի այն ազնիւ ֆրանսացի երիտասարդին հանդէպ, որ մարդասիրաբար յանձն առած էր անձամբ երթալ, այցելել այդ արհեստանոցը և գործարանները աչքէ անցընելէ վերջ՝ պէտք եղած դիտողութիւնները ներկայացնել Խնամակալութեան։ Չեմ գիտեր ի՞նչ պատճառաւ կարեւորութիւն չտրուեցաւ այն առաջարկութեանս. ես դատապարտելի կը դանեմ այդ անհոգութիւնը։ Գալով Պէրպլեբան էֆէնտի յօդուածին, անոր մէջ՝ հարուստներուն չափ մեր թերթերուն վրայ ալ պարտականութիւն դրած է, որպէս զի «լրջօրէն գործնականօրէն կարեւորը յղանան և խրատեն»։ Կը յուսամ թէ իր այս յորդորը կ'աղդէ մեր թերթերուն վրայ ալ և իրենց ինկած պարտականութեան բաժինը կը կատարեն, որպէս զի արհեստից վարժարան մը ունենալու գաղափարը օր մը գործնականացէս իրականութիւն դառնէ։

Ե. ԶԱՎՈՒՇԵԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇԱՅՈՑ ՄԷՋ



Եթէ իմ յիշողութիւնս զիս չի վրիպեցներ՝ վերջին քանի մը տարիներուն մէջ մէկէ աւելի անգամներ աւիթը ունեցանք կարգաւու որ հայ աղջիկներ կ'ուղուին Ամերիկա դառնող երիտասարդներու հետ ամուսնանալու համար։

Ու ես, ամէն անգամ ասի կարգաւուս, չկրցի դժբախտաբար մտածել բովանդակ անհեթեթութիւններուն վրայ վաճառականական այս քիչ մը արտառոց մատուցումին, ու ոչ ալ նկատելու որ ատոնք՝ այդ աղաքը՝ ինչո՞ւ խելքը չեն կրցած ունենալ իրենց մօտէն, իրենց քթին տակը դառնուած աղջնակներէն մէկ մէկ հատ ընտրելու, իրր իրենց ապագայ ընկերուհին։

Մէրսէտէս՝ Մասիսի այս սիւնակներուն

մէջ , Վեր կ'առնէ այս առիթով կարգ մը ծիծաղելիութիւնները մատուցումի ու խնդ-
րանքի առաջ քշուած կերպերուն , ու մանա-
ւանդ ընտանեկան ահարկու սպազան ան-
կերպարան ու կուրորէն սարքուած այս ամուս-
նութիւններուն :

Սակայն կէտ մը որ զիս հետաքրքրած է, ու կողզէի ըսել, Մէրսէաէսի տողերուն մէջէն կը պակսի, ինչ որ սակայն կը փափաքէի որ իմ համակրելի բարեկամս ալ նկատած ըլլար ու իր զայրոյթի բոլոր ձեւերուն կից այնքան կամայօրէն չմոռցած ըլլար :

Պէտքը չունիմ՝ Ամերիկաբնակ Հայոց կեանքէն քաղուած շատ մը պատմութիւններով ճօխացած, նկատել տալու որ ընդհանրապէս գործաւոր՝ հետեւապէս անուսում ու անգլխիբէնի ոչ-հմուտ այս տղամարդիկը ինչ-քան գետնաքարշօրէն կ'ապրին ու կը վատնեն իրենց կեանքին ու քսակին ալ ուժը այլատարր ժողովուրդի մը մէջ, որին ոչ մէկ կերպով կրնան համակերպիլ ու յարմարիլ իրենք:

Եւ յետոյ, թիւով ոչ-սակաւ երիտասարդ-
ներ ալ, որոնք պապենի երդիքներէն հեռա-
ցած՝ գութանին ու եղին հաղիւ վարժ, կը
նետեն ինքզինքնին Խաւաքի կաժ Խալան-
տայի հաւասարակից գործաւորուհիներու
գիրկը՝ սանկ քաղաքային ամուսնութիւննե-
րով գոհանալու ու, անկեղծ ըլլալու համար,
ժամանակ անցրնելու պարգայտէս։

Ամերիկա գտնուող հայ բարեմիտ կղերքը կը դիտէ ասիկա, օտարականներու գիրկ եւ ղաժ անդգոյշ ու ընդհանրապէս ցաւալի ա-մուսնութիւնները, կը պատրաստուի ղարման տանիլ, կը խրատէ ու կ'առաջնորդէ զիրենք հայ աղջիկներու, որոնք սակայն այս կողմն-րէն պիտի երթային :

Հոս է որ երեւան կ'իլլէ քեռակ մը առ
 ուծախի գործ , որմէ պզգալի երեւոյթներ
 ալ կը ծագին հարկաւորապէս , ու Վանցի
 միջնորդ կին մը կամ ուրիշներ այս կերպով
 իրենց հուանը կը հերկեն :

Սրտովս կը ձայնակցիմ Մէրսէտէսի դի-
տողութիւններուն : Կը մտածեմ միայն որ
արդեօք չկա՞ն պատրաճ ու աւելի պատուա-

բեր միջոցներ ասոր համար: Մանաւանդ չեմ կրնար վճռականորէն ըսել որ միշտ ղրկուած աղջիկները անձանօթներ կ'ըլլան, ու երկտասարդները չհաւնրելիք արարածներ:

Ի՞նչ կերպ պէտք է որակել այս երիտա-
սարդներուն ընթացքը :

Աստնք՝ իրենց աչքերով լը տեսած օտար ու
ոչ-գիտակցօրէն կնքուած ամուսնութիւննե-
րու բարոյական աւերքը իրենց ընտանքին
մէջ ու զաւակներնուն համար, ասոնք՝ զգա-
լով խօրթացումը ու հեռացումը իրենց շուր-
ջը՝ տոմիկ բարքերու, ասոնք՝ իրենց կնկե-
ղեցին սիրող անհաւանք ու իրենց լեզուի
պահպանողները, իրենք իրենց մէջը կը ցան-
կան որ ամուսնութիւնը կնքուած ըլլայ հայ
աղջիկներու հետ:

Ու անպատճառ ըսել կ'ուզեն որ հակառակ պարագային իսկ կը սիրեն իրենց չճանչցած հայ աղջիկի մը հետ ամուսնանալ քան օտար գործաւորուն հետ մը հետ: Խնդիրն այն է որ գտնուած են ու կը գտնուին ալ անոնց մէջ շատ պատուաւոր զբաղումներու տէր հայ անհատներ որոնք հաւասարապէս high-life ի պատկանող ընտանիքներէ աղջիկ գտած են ու կը գտնեն ալ, եթէ ուզեն: Ինչ որ կ'ուզեն, ու լիափաքնին ալ է որ ըլլայ, հայ աղջիկներն են հարկաւորապէս:

Ասկէ առաջ գալիք օգտակարութիւններ
ըտն վրայ արամարանիւ անհարկի պիտի ը-
լար: Ու կը հաւատամ որ ինծի հետ Մէրսէ-
տէս ալ գովողը ըլլայ իրենց այս շատ աղ-
նիւ գգացումներուն:

Արդէն քիչ յուսահաբուծիւններու չէ որ կը հանդիպինք, մեր կեանքին մէջ, Ամերիկա զտնուող Հայերու տնտեսական ու բարոյական գործառնութիւններու մասին, այնքան յաւաքիօրէն :

Հայ անհատներու ամուսնական խնդիրը անոնց ու մեզի համար քիչ կարեւորութիւնով չէր որ պիտի ներկայանար։ Կը մնայ գիտնալ սակայն թէ ի՞նչ կերպ կ'օգտուին անոնք հայ ազջիւններու մատուցումէն, եւ թէ ինչպէ՞ս կ'արժէր կանոնաւորել, լաճառականական այս կերպ գործ մը, որ քիչ մը արտառոց ըլլալ կը թուէ, իրաւ որ։

ԽՈՍԲՈՎԵԼՆԵՐ

ՄԵՏՔԻ ԿԱՅԻՆՆԵՐ



Անոնք որ աղուոր յօղուած մը գրելու միտքով առաջուրնէ շողշողուն վերնագիրներ կը պատրաստեն, կը նմանին այն ամուլ կիներուն՝ որոնք աղուոր անուններ կը պատրաստեն, սպասելով դաւակի մը զոր կուղեն ծնիլ՝ բայց չեն կրնար:

—Նոր հասնող տղաք անունին տպագրուած տեսնալու փառասիրութեան համար և երեւալու եռանդէն բռնուած է որ գրիչ կը շարժեն շատ անգամ: Եւ ճիշդ ատոր համար է որ ուռուցիկ կը դառնան ու չեն յաջողիր: Թո՛ղ ատեն մը սլարգօրէն, իրենք իրենց համար գրեն միայն: Պիտի փնտռուին օր մը:

—Աղքատութիւնը ամէնէն պատուաբեր ու առողջարար բանն է: Բայց ծայրայեղ մըրցումը, ամէնէն սարուկ ծառայութեան կը վերածէ դայն շատ անգամ:

—Ոչինչ կայ անկուտիութեան չափ, որ կարող ըլլայ քանդել արժանապատուութեան զգացում ըսուած բանը: Ստամոքսդ քանի պարպուի, գլուխդ այնչափ կը ծռես: Ատիկա կը բաւէ որ չանարգեմ դրամը և նոյն իսկ սիրեմ զայն:

—Գրեթէ միշտ, ամէնէն շատ աշխատող մարդը չէ որ ամէնէն շատ դրամը ունի:

—Երջանկութիւնը վայելքին ու աշխատութեան համաչափ մէկ խառնուրդն է: Առանց վայելքի աշխատութիւնը գրաստացում մըն է: Վայելքն ալ աշխատութիւնով է որ կը համովնայ այնչափ:

—Էրիկ մարդը որչափ ատեն որ իր սեռային կարողութիւններուն տէր է, միշտ պիտի ունենայ վայրկեան մը՝ ուր վայրագ բան մը կ'արտաշնողայ իրմէն: Ծերութիւնը՝ ատկէ զուրկ, կը դտէ կ'աղնուացնէ զայն: Միջդեռ կնկան մէջ ատոր ճիշդ հակառակն է: Որչափ ատեն որ, նոյն իսկ գեղեցկութենէ զուրկ կին մը, կարող է՞ք մըն է, միշտ պիտի ունենայ վայրկեան մը՝ ուր պիտի կրնայ անուշ սպաւորութիւն մը գործել, իրեն հաւանող որ և է մէկու մը վրայ: Առանց ատոր, կինը ծերութեան մէջ, ամէնէն տխուր ու սղեղ աւերակը, ամէնէն անհանդուրժելի ու զզուելի բանն է աշխարհի վրայ, իբր միակ բացառութիւն ընդունելով ամէն մարդու համար իր մայրը, որ ծերանալով աւելի պաշտելի կը դառնայ, անոր համար որ մայր մը այն միակ կիներն է, որուն վրայ մարդ սեռային նկատումով չի խորհիր:

—Բառերը՝ դրականութեան մէջ՝ են ինչ որ են ներկերը նկարչութեան մէջ: Քանի առատ ու տեսակալից ըլլան, արտադրութիւնը այնչափ աւելի երանդաճօխ, գերանուրբ ու կատարեալ կ'ըլլայ:

—Շատ բան գիտնալը շատ լաւ գրելու գրաւական մը չէ, ինչպէս որ դասախօսներուն մէջ, ամէնէն հմուտը չէ շատ անգամ որ ամէնէն լաւ գիտէ սորվեցնել:

—Հակառակորդներուս առաջացումին ու մեծութեանը այնչափ սրտովին կը ըրողս որչափ որ և է մէկ բարեկամիս: Ինչու որ, ինչպէս մեծահամբաւ բարեկամներ ունենալը, անսկ ալ մեծ մարդիկ իրեն հակառակորդ ունենալը, ոչ նուազ մեծ արժանիք մը կ'ենթադրէ իմ կողմէս:

—Կ'ախորժիմ աւելի ծաղր լսելէ քան գովասանք, ի՛նչու որ այս վերջինը քիչ անգամ անկեղծ է, մինչդեռ միւսը որ հակառակորդէ մը կը բղխի, գրեթէ միշտ:

—Օր չանցնիր որ կէս կամ մէկ ժամ չըղբաղիմ նշանաւոր հեղինակի մը հոյակապ մէկ էջին թարգմանութիւնովը: Ատիկա գրականութեան մէջ իմ մարմնամարզս է:

—Ճամբորդութիւնը յաւելուածական անհրաժեշտ այն դասընթացքն է ուր մարդ կը հասունանայ և գրողը կը կատարեւագործուի:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԳՊՐՈՑԻ ԳԻՐՔԸ. Տե՛ր եւ հրատարակիչ Զարեհ Թորոսեան:—Նախապատասխան **սարի** (1901).—Ա. **սարի**. Աղջկանց մաս (1902).—Բ. **սարի** (1903):

Կատարեալ չարք մը չեն կաղմեր, ինչպէս կը տեսնուի վերի ցանկէն, այս երեք հատորները: Կը պակսի առաջին տարիի մանչերու բաժինը, և երկրորդ տարիի աղջկանց բաժինը, եթէ անպատճառ մտադրուած է այս երկու մասերը անջատ կերպով ներկայացնել: Զարեհ Թորոսեան, որ ուսուցչութեան ասպարէզի մէջ բաւական փորձառութիւն ձեռք բերած է, ձեռնարկելով ընթերցման գիրքերու այս շարքին, օգտակար ծառայութիւն մը մատուցած կրնայ համարուիլ: Բայց կա՞ր այնքան անհրաժեշտ պէտք մը ընթերցման գիրքի. ատիկա չեմ գիտեր և կամ չեմ կրնար վճռական կերպով կարծիք յայտնել: Հիմա, ամէնէն յաճախ երեւցած դասագիրքերը այս ճիւղին և այս սեռին կը պատկանին, մինչդեռ անդին ուսումներ կան որոնք կ'աւանդուին առանց իրենց համար գոնէ մէկ դասագիրք մը ունենալու մեր լեզուովը գրուած, և արդի մանկավարժական սկզբանց համաձայն:

Ուստի պէտք է ըսել ամէն բանէ առաջ թէ Զարեհ Թորոսեան անկոխ գետնէ մը չէ որ կ'անցնի, թէ՛ իր անցնելու եղանակը տարբեր եղած ըլլայ: Իր գործը մեթոտի տեսակէտով օգտակար կրնայ ըլլայ, եթէ մասնաւորապէս կարող ուսուցիչի ձեռքին տակ իյնայ: Բայց արդէն այդ սլորագային ամէնէն թերի դասագիրքն ալ օգտակար կ'ըլլայ: Դասագիրքերը միայն գործիքներ են, վարպետ գործածողներ անհրաժեշտ են: Առանց այդ պակասը լրացնելու, ըստ իս աւելորդ է այսքան մեթոտներու փորձը դոր յարատեւ կերպով կ'ընեն մեր հրատարակիչները: Դպրոցի գիրքներն ալ իրենց համար նշանաբան ընտրած են սա երկու խօսքերը. Ա. «Զբաղատրուած դասը՝ գոց անտուկի մէջ դրուած ճրագի կը նմանի. անօգուտ է ան և չարչարանք աշակերտին».—Բ. «Ուսումը չա-

րիք մըն է ու վտանգ մըն է տղուն՝ եթէ սրտի կրթութիւնը չընկերանար անոր» որոնց չեմ գիտեր թէ ո՞ր աստիճան համապատասխան գործեր կրցած է պատրաստել հրատարակիչը որ «ընաւ յաւակնութիւն չունի հեղինակի տիտղոսին» ինչպէս ինքը անձնապէս կը յայտարարէ: (Տե՛ս նախապատր. տարի, էջ Ժ.)

«Անձնական փորձառութենէս օգտուելով և ուսանողաց վիճակին մօտէն գիտակից, աշխատեցայ օտար դասագիրքերէ քաղել մէկ մասը ընտրողութեամբ և յարմարցնել մեր միջավայրին» կ'ըսէ, բայց հեղինակութեան մը չափ կարեւորութիւն ունի մեր կարծիքովը քաղել և միջավայրին յարմարցնել գիտնալը: Եւ այս բանին մէջ յաջողած է, պէտք է ըսել, Զարեհ Թորոսեան, որ Ch. Lebaigueի «Le livre de l'école»ը իրեն ուղեցոյց բռնելով կրցած է քիչ չատ ներկայանալի գործ մը տալ մեր տղայոց յարմար:

Իր սկզբունքները եղած են՝ այս գործին պատրաստութեան մէջ.

Ա. Ոճի և լեզուի բարձրութենէ զգուշանալ, բացառապէս պարզութեան և դիւրիմացութեան հետեւիլ, ընդունելով լեզուի աստիճանական բարձրացումը: Գրել պարզ աշխարհաբարով. տղուն խօսած, հասկցած լեզուովը և ոչ թէ մատենագրական և բանալիօսական բարձր լեզուով:

Բ. Ամէն դաս և բառ խնամով բացատրել, իր տուած բացատրութիւններովը միայն ամփոփումը տալ, կատարեալ բացատրութիւնը ուսուցչին թողով:

Գ. Գիրքին նիւթերը կարելի եղածին չափ մատչելի ընել և անոնցմով օգտակար թելադրութիւններ տալ ուսանողին, և ընթերցման գասովը՝ համակերպող դրութեամբ մը անդրադառնալ նաև ուրիշ դասերու վրայ:

*
*
*

Այս երեք սկզբունքներուն ալ բաւական

հաւատարիմ կրցած է գտնուիլ. միայն թէ լեզուի բարձրութենէ գգուչացած ատեն լեզուի նեղութեան հոգ չտանելու ձախողութեան մատնուած է: Նոյն իսկ նախապարտատական տարւոյն առաջին էջին մէջ, որ Զօն մը է, քերականական անձներելի սխալ մը կայ:

«Յիշատակ վաղամեռիկ բարեկամիս Սահակ էֆէնտի ժամկոչեանի և եղբօրն Մելքօն էֆէնտի ժամկոչեանի ու կրթութեան սիրահար, աւանդ, տարածամ փոխեցան յաստեաց»:

Նոյնպէս չեմ գիտեր ինչո՞ւ անիմաստ դրտայ սա տողերը. «Մտքով բաւական դարգացած մարդիկ անգամ, հազիւ կրնան հասկընալ այս գրքերէն շատերը: Ու նոյն իսկ քիչ չեն դասասունք ալ, անկարող զանոնք լիովին հասկնալ եւ յստիօրեմ բացատրել ուսանողներուն»:

Նոյնպէս գրաբարի հակում մը կայ մասնաւորապէս հեղինակին գրիչին տակ, ինչ որ կ'երեւայ այս «պարզ աշխարհաբար» գիրքին մէջ: Ասկէ զատ, Քերականական անհրաժեշտ միօրինակութենէն թերի է այս գործը, տեղ տեղ, ճիշդ այնպիսի կէտերու մէջ որոնք կըրնան խնդրոյ առարկայ ըլլալ, բայց դասագիրքի մը հեղինակին կողմէ պէտք է որոշ սկզբունքով մը դատուին և ընդգրկուին:

Օրինակ մը տուած ըլլալու համար ըսենք թէ «մը» բառը որոշ օրէնքով գործածուած չկրցանք գտնալ: Շատ մը տեղեր «մ'ես» «մ'է» գրուած է, ուրիշ տեղեր ալ «մըն ես» «մըն է»: Ասիկա կը փաստէ գործին կատարելութեանը, և տղուն միտքն ալ չփոթութեան մէջ ձգելու մեծ անպատեհութիւնը ունի: Իրաւ է թէ յարգելի հեղինակը առօրեայ մամուլին, հրատարակուած գիրքերուն և պարբերականներուն մէջ տեսնուած անհերքաշնակութեան վրայ հիմնուած իրաւունք ունենալ պիտի կարծէ ինքն ալ զանազան դրութեանց միանգամայն հետեւելու, սակայն ասիկա շատ արդարացուցիչ պատճառ մը չէ: Արդէն մեր աղոյց միօրինակ լեզուով մը կըրթութիւն և ուսում չառնելն է պատճառը որ աշխարհաբարը այսօր տակաւին որոշ ձև և կաղապար մը չէ առած: Ուսումնական խոր-

հուրդներ իրարու յաջորդած են, առանց որոշ բան մը կարենալ ընելու և իրենց գոյութեան ու նպատակին յարմար այս ձեռնարկը միշտ յետաձգուած է: Հիմա որ այլևս աշխարհաբարի և գրաբարի խնդիրը միանգամ ընդ միշտ փակուած է, հիմա որ այլևս ոչ ոք կ'ուրանայ տղուն խօսած հասկցած լեզունովը զայն կրթելու և դարգացնելու պէտքը, ժամանակը եկած հասած կը համարինք մենք լեզուական միօրինակ դրութեան մը ընդունելութեանը և այդ լեզուական ընդհանուր և որոշեալ ձեւէն դուրս աղճատ ու խառն լեզուով գրուած բոլոր դասագիրքերու (լեզուի և գիտութեանց) մեր վարժարաններէն բոլորովին վտարուելուն:

Անշուշտ այս երեք դասագիրքերը այդ խառն և աղճատ լեզուով գրուած դասագիրքերէն համարել կարելի չէ, որովհետեւ ամբողջութեան մէջ շատ ծանր հակասութիւններ չարտունակելնէն զատ՝ քիչ շատ ալ կանոնաւոր և սահուն աշխարհաբարով մը գրուած են:

Այս պարագան կարեւոր է չեշտել, մասնաւոր ընթերցման գիրքի մը վրայ ուշադրութիւն դարձուած ատեն, վասնզի մանուկը անկէ ամէնէն աւելի աղդուելու արամադիր է: Նոյնպէս այն խնամքը զոր ունեցած է դասերը և բառերը բացատրելու համար, իրաւ է թէ կրնայ ուսուցիչներէն ոմանց համար աւելորդ նկատուիլ, բայց շատերու համար ալ գրեթէ անհրաժեշտ է: Ասոր մէջ արժանապատուութիւն վիրաւորող բան մը չենք տեսներ մենք. ընդհակառակը: Արդէն հեղինակը յայտնապէս կ'ըսէ թէ «ըրաժս պարզ ու սահմանափակ բան մըն է, դեռ ԵԱՏ ԲԱՆ կը մնայ ընել ուսուցչին՝ դասն ու բառերը կատարելապէս հասկցնելու համար ԵԱՏԱՆՈՂԻՆ»: Ասիկա ճշմարիտ գիտողութիւն մըն է որմէ պէտք է որ օգտուին այս դասագիրքէն դասախօսող ուսուցիչները:

Եթէ այդ բացատրութեանց թելադրութիւնները եղած չըլլային իր գիրքին մէջ, շատ հաւանական է որ ուսուցիչները պէտք եղած խնամքը չունենային դասերը ու բառերը պէտք եղածին պէս ըմբռնելի ընելու համար

ուսանողին : Բայց այս բանը սա անպատեհութիւնը ունի որ աշակերտին դիւրութիւններ կուտայ ուսուցչին : հարցման առաջուց պատրաստուելու և ասով միտքը կաղապարեալ կաշկանդում մը կունենայ : Ուստի լաւագոյն ձեւը պիտի ըլլար, մեր կարծեօք, զատել ուսանողին և ուսուցչին բաժինները փոխանակ զատելու աղջկանց և տղայոց մասերը :

Այս թելադրութիւնը անոր համար ընելու կը համարձակիմ, վասնզի Զարեհ Թորոսեան քաջութիւն ունեցած էր իր գիրքին առաջաբանին մէջ յայտարարելու թէ աւելի սրտի ձայնին անսացող մըն է քան թէ չահու (Տես. Բ. տարի, էջ Գ.), և թէ «վաղուց ամէն գործի մէջ նպատակը եղած է՝ հանրութեան և ուսանող դասուն օգտակար եղածը միայն ըսել» (Նոյն) :

Այս բարձր սկզբունքները զինքը այս ծանր դոհողութեան յանձնառու պէտք էր ընէին, ինչպէս որ իր բարեկամին խօսքովը աղջկանց և տղայոց երկու բաժանումներով հրատարակումը «առաջին և ծանր դոհողութեան» ենթարկած էին զինքը : Իր բարեկամը իրաւունք ունի երբ կ'ըսէ թէ «Շատ մը դպրոցների խնայողութեան համար ստիպուած են միացնել երկու սեռի դասաւանդութիւնը, որով կարելի չըլլար զատ դասաւարտի գործածութիւնը» :

Հետեւաբար աղջկանց յատուկ դասագիրքը, հակառակ խնամեալ գործ մը եղած ըլլալուն, առանձին դասագիրք մը ընել չարժեք :

«Աղջկանց յատուկ ընթերցման կանոնաւոր դասագիրքի մը չգոյութիւնը զոր կը զգային չատեր, մեծ պակաս մը թուեցաւ ինձ ու մանաւանդ անհրաժեշտ պէտք մը՝ բարոյական տեսակետով» կ'ըսէ հեղինակը, ինչ որ տեսակ մը սխալ է : Աղջկանց առանձին դասագիրք մը գոյութիւն ունենալէն յետոյ երբ զայն գործածող չըլլայ, ի՞նչ կարեւորութիւն ունեցած կ'ըլլայ անոր գոյութիւն ունենալը : Ասկէ զատ, բարոյական տեսակետով անհրաժեշտ պէտքը չկրցանք ըմբռնել :

Շատ ճիշդ դատողութեան մը արդիւնք չէ հեղինակին սա կարծիքը թէ «երկու սեռի

տղոց միասեղ դասաւորումը, չկայ խոհուն և ողջամիտ անձ մը, որ արդարացնէ, պատճառը ինչ որ ալ ըլլայ» : Ասի սխալ ըմբռնումէ մը ծագում կ'առնէ : Կը յիշեմ վերջերս հրատարակուած վիճակագրութիւն մը որ այս դրութեամբ դաստիարակութիւն առած տղոց բարոյական սայթաքումները կը բաղդատէր անշատ դրութեան հետ և զանոնք գերակշիռ կը գտնար : Միասեղ դասաւորման մէջ բարոյացուցիչ բան մը կայ, ընդհակառակը, քան թէ անբարոյացուցիչ : Եթէ մանրամասնաբար քննուի մեր վարժարանաց բարոյական վիճակը, այսօր չատ բարձր չպիտի գտնուի այն, մինչ եթէ այս միւս դասաւարտեալ դրութեան հետեւէին անոնք, պիտի տեսնուէր տարբեր վիճակ մը՝ որ աւելի մարդկային և աւելի բնական է քան որ և է ուրիշ վիճակ :

Ի՞նչ ըսել է տան մը մէջ մօր մը խնամքը վայելել, քոյրերու հետ միասին մեծնալ, փողոցին մէջ աղջիկ տղոց հետ խաղալ, ըզբօսնուլ և դասի առեն իրարմէ բաժնուիլ. ճիշդ այն պահերուն ուր ուղղակի իրենց դաստիարակներուն հսկողութեան ներքեւ են, աւելի կանկածելի երեւնալ քան այն պահերէն որոնց մէջ իրարու քով են համարձակ, չատ ուղիղ տրամաբանութեան մը արդիւնք չեմ նկատեր ես : Սեռի խնդիրը նոյնիսկ այսքան փոքր հասակի մէջ զգացնել, տղուն մէջ տարբեր մտածութիւններ ծնունդ առնելուն նպաստել ըսել չէ : Ինչ որ բնութենէն պիտի պատահի տղուն մէջ՝ անիկա արդէն պիտի պատահի, անոր դէմ թումը կանգնել կարելի չէ : Աղջիկները և մանչերը իրարմէ զատելով նոյն իսկ չի յապաղիր այս զարթումը :

Հետեւաբար արբունքէ առաջ նոյնիսկ ընթերցման գիրքերը իրարմէ զատելու աստիճան աղջիկները և տղաքները իրարմէ դատելը օգուտ մը չունի, եթէ ոչ՝ տղոյ ոչ՝ ընկերական, նուազ մարդասէր և չատ մարդատեաց, ընկերութենէն և մանաւանդ կնոջ ընկերութենէն հեռու փախող և հետեւաբար կեանքի թիւր ըմբռնումներով սերունդի մը պատրաստութեան :

Այսօր եթէ խիստ քննութիւն մը կատար-

ուի, կը պնդեմ թէ աղտոտութիւններ երեւան պիտի հանէ մեր վարժարաններու մէջ որոնք Զարեհ Թորոսեանի բացատրութեամբ բարեբաղդաբար և մեր խոնարհ կարծեօքը դժբաղդաբար իրարմէ անջատ յարկերու և դասարաններու մէջ կ'ուսանին: Ի՞նչ են այն ծանր անպատեհութիւնները որոնց կ'ակնարկէ հեղինակը, եւ ինչեր են որ կը սպառնան տակաւ թուլցնել մեր աղջկանց բարքերը:

Ճիշմարիտ բարոյականի—կեղծեալ և ստապատիր բարոյականին հետ գործ չունինք — դէմ ոչինչ կայ միատեղ դասաւանդման մէջ, երբ մանաւանդ դաստիարակը գիտէ իր ուսանողին միտքին մէջ զետեղել բարոյականի տարրական սկզբունքները:

Եւ եթէ բան մը կայ ամէնէն աւելի պակաս, այն ալ մեր վարժարաններուն մէջ այս բանը ընելու կարող ուսուցիչներու պակասն է: Այսպէս, ի՞նչ օգուտ ունի հեղինակին մասնաւոր ջանադրութիւնը «ուսանողին հոգիին մէջ արթնցնելու և քաջալերելու՝ աշխատութեան, աղնուանալու և բարեկրթութեան փափաքն ու գաղափարը» երբ ուսուցիչը կը պակսի անոր վրայ անդրադարձող և պէտք եղածին պէս բացատրող: Այս թերութիւնը մասնաւոր ընելով էր որ յօդուածս սկսայ և դարձեալ կարգը այնպէս բերաւ որ անոր ղառնամ նորէն: Ամէն պարագայի մէջ՝ Զարեհ Թորոսեանի դասագիրքը լաւ գործիք մըն է, եթէ գործածելու ձեռնհաս անձեր գտնուին:

Ս. Ս. ԳԵՂԱՆՍՅԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՅՔ

Ի նպատակ երիտասարդ դերասան Պ. Երուանդ Թուլայեանի. որ ծանօթ է նաեւ իր երգիծական գրչովը, և Պ. Նուպարի՝ որ երիտասարդ-սիրահարի դերեր կը ռատարէ, թատերական շատ սիրուն matinée մը կազմակերպուած է յառաջիկայ կիրակի ցորեկուան համար, Բերա, Քօնքօրտիա թատրոնին մէջ, ուր օսմ. կատակերգակ—զաւեշտախոսմը պիտի ներկայացնէ ԶՈՒՄԱՆՆ ՈՒ ՓԵՍՍԱՆ գօմէտին, որ ֆրանսացի նշանաւոր թատերերգակ Մօրիս Օրտօնոյի է՛ն յաջող հեղինակութիւնն է: Ներկայացումը պիտի սկսի նշանաւոր զաւեշտով մը, Ժիլիքին ապետալստ զոյ մը չէ, զոր պիտի ներկայացնեն Տիկին Գոհարիկ Շիրինեան, Պ. Չափրաստ և թարգմանիչ-նպատարնկալը՝ Թուլայեան: Ամէն յաջողութիւն կը մաղթենք սոյն ներկայացման, որ նոր քաջալերութիւն մը պիտի ըլլայ երկու երիտասարդ արուեստագէտներու:

ԲԱՐՔԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մարդս կ'առաջարկէ... և կ'ինքնը՝ կ'ամ կ'ընդունին և կ'ամ կը մերժեն: Այո՛ կ'ամ ոչ, tout est là:

Ինչո՞ւ կ'ընդունին և կ'ամ ինչո՞ւ կը մերժեն: Երբեք չէ գիտցուած ասիկայ: Հաշուի չի գալիք խնդիր մըն է այս՝ որուն խելք չեն հասցուցած ոչ միայն աշխարհիս ամէնէն խելացի մարդերը, այլ նոյն իսկ անոնք՝ որ ամէնէն շատ գործ ունեցած են կ'ինքնու հետ, գեղեցիկ զբաղում մը՝ որուն տակէն երեսի ջուրով դուրս ելլալու համար պահանջուած ոյժ՝ ապահովապէս՝ մարդուս ուղեղին մէջ չէ:

Կ'ին մը ո՛չ կ'ըսէ, երբ ա՛յո պիտի ըսէր եթէ առաջարկութիւնը կէս ժամ առաջ դար իրեն: Ան որ այսօր կը մերժէ, պատճառ մը չի կայ կարծելու թէ վաղը չպիտի հաւանի: Հինչարթի օրը մերժող կ'ինքն՝ կ'ընայ ընդունիլ չարաթ: Տիկինը «ոչ» ըսաւ որովհետեւ առաջարկութիւնը ըրած պահուգ՝ փոխանակ ոտքի վրայ գտնուելու, նստած էր:

Մարդեր կան որոնք հանապի conquête մը ձեռքէ փախցուցած են պիե-մարեհ comp-let մը հագած ըլլալուն, մինչդեռ պիտի յաջողէին եթէ հագածնին à taille ժաքէթ մը ըլլար սե չէվիթէ:

Երբեք չի գիտցուիր թէ մէկ վայրկեանէն միւսը կ'ինքն ի՞նչ արամադրութիւններ կ'ընայ ցոյց տալ: Ամսուն սկիզբը բարի եղող կ'ին մը՝ կ'ընայ չար ըլլալ ամսուն վերջին:

Ամէնէն պարկեշտ կ'ինքն ջերմաչափի ազդեցութեան տակ կ'ընայ միտքը փոխել: Սանդիկբատի 21 աստիճանին կ'ընայ այս ըսել, և 23ին ոչ: Կ'ինքն կան որոնք անկումները ցերեկ ատեն միայն կ'ընան ընդունիլ, բայց գիշերները երբեք:

Վէրնի Կօչիկ հազնող երիտասարդ մը կ'ընայ լաւ ընդունելութիւն գտնել գեղեցիկ կնկան մը քով և մերժուիլ՝ եթէ հագած կօչիկը chevreau է:

Մէկ խօսքով, ամէն բան յարաբերական (relatif) է այդ տեսակ յարաբերութեանց մէջ :

Կոնջ մը բարոյականին վրայ մեծ ազդեցութիւն ունին—դիտուած է այս—ջիղերը, օդը, տեղը, ժամը, միջոցը, վայրկեանը, պարագաները, նստած քանարէին ressortները, վարագոյրներուն դոյնը, ձեղունին բարձր կամ ցած ըլլալը, օդին չոր կամ խոնաւ ըլլալը, լուսնին շրջանները, տաքը, պաղը, կերած կերակուրներուն տեսակը, կարգացած գրքին որակը, լսած երգին եղանակը, հագած շրջագոգեստին ձեւը, ձեր պիտերուն դոյնը, գրպաննիդ ունեցած ստակնուդ քանակը, առտուն ո՛ր կողմին վրայ արթնցած ըլլալը և ուրիշ հազարումէկ բաներ որոնց ամէնքն ալ այս վայրկեանիս միաքս չեն գար, ինչ որ շատ կը ցաւիմ :

Կան, սակայն, կարծուածէն աւելի պատուաւոր կիներ որոնց բարոյականը բարոյական է և զօրութիւն մը չկայ որ այլայլէ զայն :

Այս յիշատակութիւնը կ'ընեմ, նախ ճշմարտութիւն մը յարգելու համար և յետոյ, քիչ մըն ալ վախէս : Ասոնց բերանը ինչպէ՞ս գոցելու էր... :

Շատ ապրին առոնք, բայց տեղերնին թո՛ղ մնան որովհետեւ բանի մը չեն ծառայիր... Գոնէ գրչի աշխատաւորներուս համար :

Եթէ աշխարհիս բոլոր կիներն ալ պատուաւոր ըլլային, թողէք որ շատ անհամ պիտի ըլլար կեանքը, միւս կողմէ աշխարհիս բոլոր գրագէտները անօթութիւնէ պիտի մեռնէին, որովհետեւ որ և է նիւթ չպիտի գտնէին գրչի տակ դնելիք :

Բոլոր կիները պատուաւոր... Եթէ ասիկայ իրաւցնէ ըլլար, այն ատեն ո՛ր պիտի գտնէինք վէպերը, օբերաները, բանաստեղծական հատուածները, երգերը, թատերական դուլս—գործոցները, լրագիրներու faits diversները և բոլոր այն բաները զորս պատուաւոր չեղող կիները կ'երգեն, կը փառաբանեն, անոնցմով կ'ապրին, գոյութեան իրաւունքսին անոնցմէ կը ստանան :

Բոլոր կիները պատուաւոր... օհ, եթէ ասիկայ կարելի ըլլար, Տիւմա Որդին կօշկա-

կար կ'ըլլար. թերեւս և Քասիմ... սաիւրիչ :

Աստուած՝ իր անհուն բարութեան մէջ՝ չէր կրնար երեսի վրայ թողուլ իր գրագէտ արարածները և անոնց համար ստեղծեց բարոյազիրկ կինը ինչպէ՞ս կորեկը... Թռչնոց պզտիկներուն, aux petits des oiseaux! :—

Քիչ մը ևս եթէ ուշադրութիւն չընէի, յօդուածս փիլիսոփայական կամ հոգեբանական հոլ մը պիտի առնէր, ինչ որ դիտաւորութեանս մէջ չկար :

Ես ուրիշ բան պիտի ըսէի :

Կիները,—ինչպէ՞ս որ դուք ինձմէ աղէկ գիտէք—ամենքն ալ մէկ խմորէ շինուած չեն : Բարեբաղդաբար ասանկ է, ապա թէ ոչ՝ ստիպուած պիտի ըլլայինք ամէն օր միեւնոյն հացը ուտելու, մինչդեռ անդին ֆրանձէլան կայ, պիրայի հացը, կակուղը, չորը, թարմը, օթեկը, ձերմակը, սեւը, քիչ եփածը, շատ եփածը ևլն :

Մարմնական, ֆիզիքական տարբերութիւնները մէկ կողմ, բարոյական տեսակետով ալ կիները շատ տարբեր են իրարմէ :

Այսօր այս վերջի տարբերութիւնները պիտի զբաղեցնեն զիս և պիտի ջանամ ցոյց տալ ձեզի թէ կիները՝ իրենց այլազան խառնուածքին մէջ՝ ինչպէ՞ս կ'ընդունին կամ կը մերժեն առաջարկութիւնները որոնք էրիկ մարդոց կողմէ կուգան իրենց :

Տեսակ մը հոգեբանական ուղղեցոյց՝ մըն է այս, Bede ackerի դրութեամբ որմէ կրնան օգտուիլ ամէն անոնք որոնք դեռ խակ են... առաջարկութեան արուեստին մէջ :

Հետաքրքիր կ'ընէ :—Արդեօք քա՞նի քանիներու զուլսը դարձուցած ես, սակայն հոգ չէ, գիտնալով կը խաբուիմ կոր, գիտցած ըլլաս :

Կանխանոգը :—Ո՛վ գիտէ երէկ գիշեր ո՛ր էիր :

Յաճակողականը :—Ձիս ո՛վ գիտցար... : Բարեկամականը :—Կ'երգնում որ դուն առաջինն ես :

Իմաստակը :—Նորէն մեղքի կը հանդպցուն ևն կոր զիս խեղանէ՛թ :

Ասպետականք:—Մէրը Աստուծոյ է, մար-
դիկ չեն խառնուիր:

Փափկասիրք:—Մեղքնալուս է, ուրիշ
բան չի գիտնաս:

Տրամադիւիսք:—Աւելի աղէկ է որ մեռ-
նիս...:

Միամիտներք:—Էրիկս իմանա՞յ նէ...:

Արուեստագէտներք:— Է՛յ, ի՞նչ պիտի
տաս...:

Քնարերգականներք:—Սաքսի իշխանուհին
անգամ չի դիմացաւ...:

Ողբերգականներք:—Գեանին տակը կ'անց-
նիմ կոր, ես տա՛նկ կընիկ էի:

Գործնականներք:—Կօշիկներդ մի՛ հաներ:

Շնորհալիներք:—Դուն քովս եղիր, աշ-
խարհ հոգս չէ:

Պատուաւորներք:—Մարդու բան չըսես,
ոտքդ պագնեմ:

Ուսեալք:—Ինչպէս Ռօմէօ և Ժիւլիէթ,
Տաֆնիս և Քլօէ...:

Անգղացիք:—Հիմայ ինչ ծան ունիմ նէ կը
պրումս:

Զգայունք:—Մէյ մըն ալ ե՛րբ պիտի գաս...:

ԳՐԻԶԱՆԹԻՄ

ՍԵՐՏ-ՔՈՔՐԱՆՈՐ

Սեղանին փոխիկ կախուած բուրվառին
Կըսակին մէջը սաստիկ, արծաթուն,
խունկի հասիկներ ամբողջ կը վառին,
Միայն սեւ մոխիր մը բողբոլ անգոյն:

Ու ոյր-մոյր բույանք ծուխին
Բոյրով մը անուռ ու ոգեպարար,
Բուրվառէն վի՛ր վի՛ր մեղմիւ կը ծըխին
Պարուրելով վեհ խորանվն կամար:

Սիւսս ալ բուրվառ մը զգացումներու,
Սիրոյ խորանին փոխիկը կախուած,
Կ'այրէ, կը մոխրէ յոյզեւ սիրարկու:

Արդեօք պիտի տա՞ս իրեն Սէր, Ասուած,
Ու իր խունկ —սէրը հանգչելու համար
Քոյր-սիւսս տ'ունեմայ պաշտօնի յարմար...:

Ցարսօն

Գ. Հ. Գ.

Եւրոպայի Հայոց առաջնորդ Տ. Գէորգ
Լեփսիկ. Իւթիւճեան նախորդ շաբթուն Մար-
տիրոսյէն Բարիզ ուղևորեր է, Անգլիա եր-
թալու համար՝ հովուական այցելութեան:
Յաջորդաբար պիտի այցելէ նաև Վիէննա և
Պրիւսէլ:

Հայ Հռոմեականաց Կ.—Պատրիարքը Մայ-
րադոյնութեան աստիճան տուաւ Վիէննա-
կան Միաբարեանց Բանկալթիի վանատան
մեծաւոր Հ. Գրիգորիս Վրդ. Գալէմքեար-
եանի:

Յաւով կը ծանուցանենք Թովմաս էֆ.
Թէրզեանի կրտսեր որդւոյն՝ ԱՐՄԱՆ Թէր-
ԶեԱՆԻ մահը, տասնըփնդամեայ ծաղիկ հա-
սակի մէջ, կարճատե հիւանդութենէ մը ետ-
քը, և այս դառն կորուստին առթիւ մեր
վշտակցութիւնները կը յայտնենք յարգելի
գրագէտ-ուսուցչին ինչպէս նաև Տիկին Թէր-
զեանի ու զաւկներուն:

* *

Թէյի ծանօթ վաճառական Կարապետ էֆ.
Եավրուեստն դժբաղդութիւնը ունեցաւ կոր-
սնցնելու իր մայրը՝ Տիկին ԱՐՄԻԿ Մ. ԵԱՎ-
ՐՈՒԵԱՆ, որուն յուզարկաւորութիւնը հան-
դիսաւորապէս կատարուեցաւ երեքշաբթի օրը
Մաքրիզիւղի եկեղեցին, ազգականներու և
բարեկամներու բազմութեան մը ներկայու-
թեամբ, որոնք իրենց ցաւակցական զգացմանց
հաւաստիքը արտայայտեցին անձամբ: Հան-
գուցեալ բարեպաշտ Տիկինը, իր կենդանու-
թեանը, փափագ յայտնած ըլլալով 20 օտ.
ոսկի նուիրելու Վանայ Կեդր. վարժարանին,
իր որդին փութաց կատարել մայրական այս
բաղձանքը և այս առթիւ ուրիշ դրամական
նուէրներ ալ եղան, բարեկամներու կողմէ,
զաւառային կրթական այդ հաստատութեան
ինչպէս նաև Ս. Փրկչի Հիւանդանոցին, փո-
խան ծաղկեպսակի:

Այս տխուր պարագային մէջ, մեր ցաւակ-
ցութիւնները կը յայտնենք Կարապետ էֆ.
Եավրուեստի և ընտանեացը որոնք ամէն
կողմէ վշտակցական համակիր արտայայտու-
թիւններ ընդունեցին իրենց այս դառն սու-
գին առթիւ:

ԼԻԼԻԷՆ ՄՕՐՐԻՍ

7.

(LILLIAN MORRIS)

Գրեց Հենրի Բ Սենթիսլիք.

Թարգմ. Ջ. Գ. ԹԻ-ՍԱՐԱԳ.

Վարժուած ամայի անջրպետներու կեանքին, բնութիւնը մօրս պէս կը սիրէի և միշտ սիրած էի այդպէս. բայց այդ օրը կը զգայի որ արարիչին ձեռքը մեր հոգիները հեշտացնելու համար, մասնաւորապէս շքեղ ու չնայ-խարհիկ բան մըն էր կաթնցուցած անոր մէջ։ Դեռ շատ կանուխ էր. լոյսը հազիւ թէ ճեղքուած էր. արշալոյսը կը բռնկէր ճերմակ ընկուզեփներու ոտերուն մէջէն. ցօղը կը կաթկթէր ուռիի տերեւներուն ծայրէն. քիչ քիչ աշխարհ կը լուսնար։ Շատ չանցած, մարդահաւերու անհամար երամենի եկան կանգ առնել լիճին դիմացի եզրին վրայ, խմեցին ջուրէն, դորշադոյն փետուրնին ու ճերմակ լանջերնին մաքրեցին, յղկեցին և մեծաբերձ խոտերուն մէջէն ալօսներ բանալով մկննցան։

—Օ՛հ, Ռա՛լֆ, ի՛նչ աղուոր է այս տեղը, մրմնջեց Լիյիէն։

Նա ա՛յո, ան ի՛նչ աղուոր էր: Ու այդ նախնական ընտրեան հանգարտութիւնը, անվտանգ անդորրաւէտութիւնը, ինքնաբեւ թաթար կը պարղէին մեր հիացիկ աչքերուն առջև, պատկերը՝ զո՞վ ու անուշաբոյր աժա-րանոցի մը մէջ՝ փակուած իսաղաղիկ կեանքի մը՝ որ յարանման ու անպատահար, բարեբաս-տիկ օրերու շարք մը պիտի ըլլար մինչև յա-ւրտեհական հանգիստի օրը սուեռդ: Մեղի անանկ կուգար որ անապատին մէջ ընդհանուր այս զարթնումը՝ նշանուած ըլլալնուս հրճուան-քը կ'արթնցնէր մեր մէջ ու առստուան յաղթա-կան այս պայծառութիւնը, մեր հոգիներուն ամենէն թաքուն ծայրերը կը յուսաւորէր:

Թանկարժեք, լճակիրն հարթի հայելին խռովեցաւ
նեղ շրջանակով մը, թեթեւ կոհակաւորումով
մը՝ որ լայնցաւ տարածուեցաւ Ֆինչէ եղերք-
ները և ջրշունին մը մօրուեղ դէմքը երեւցաւ
նորածագ արեւին ճառագայթներուն տակ տա-
մուկ ու վարդագոյն. անոր ետեւէն երեւցան
աւելի չորացած աղգակիղներ, անոնց ալ և-

տեւէն երկու դուարթեուն պղտիկ դունչեր, իրենց կարգին դուրս եկան ջուրին խորու-
թիւններուն մէջէն և արագօրէն սկսան լսողալ, ջուրը ճեղքելով անաղմուկ, ետեւնին
կապոյտ շաւիղ մը գծելով, հեւալէն և ու-
րախութեան պղտիկ ճիկեր արձակելէն: Ա-
մենքն ալ թումբին վրայ մագլեցան, նստե-
ցան ոստերուն վրայ և տեսակ մը անուանա-
կոշութեան սկսան: Այդ նշանին վրայ՝ մեծ ու
պղտիկ, սև ու ճերմակ գլուխներու բազմու-
թիւն մը, կարծես հմայքով դուրս խուժեց
ամէնքը մէկ սկսան խաղալ ջուրին վրայ,
եղբրքներուն վրայ, ուրախութեան աղաղակ-
ներ արձակելով եւ հեղուկ մարգրիտներու հրա-
խաղութեան մը մէջ իրար հալածելով, խո-
րասուզուելով, նորէն երեւան գալով ու լի-
ճին մակերեսը աղմկալի շարժումներով խը-
ռովելով: Յանկարծ, առաջին այն զոյգը որ
հանդարտօրէն կեցած էր թումբին վրայ,
սկսաւ տագնապալի սուլիւն մը արձակել իր
սեղմուած ունդունքին մէջէն օդի ուժգին
հոսանք մը փչելով դուրս եւ ահա սմբողջ
խումբը ցրուեցաւ, կէսը պատնէներուն վը-
րայ մագլելով, միւս կէսն ալ աներեւութա-
նալով սեպեղրին ուռններուն արմատներուն
մէջ, ուր ջուրը սկսաւ եռալ ու պղպշալ, երբ
միեւնոյն ատեն կրծող ակումներու, փրցու-
ած տերեւներու, յեղակարծ դործունէութեան
ու եռանդազին ոռնումներու ժխոր մը կը
բարձրանար:

Լիլիէնն ու ես, երկարօրէն կեցանք հոս, տեսարանը վայելելու համար. դեռատի նշանածո բուռն շահագրգռութիւնով կը դիտէր այդ հնարիմաց սրատուններուն կեցուածքը, աշխատութեան կերպը, բարքերը, սովորոյթները, ու շարժումի այն շնորհը ու դիւրաթեւութիւնը՝ որ անոնց մենաշնորհն է որչափ ատեն որ հաղորդակցութեան չեն մտած անգութ, անողոք մարդերուն հետ: Բայց

Լիլիէն ուզեց տեղը փոխել եւ ադ պահուն, մեզի ծածկող ծառին մէկ ոստը չթրտացուց. բոլոր ջրչունները, երկվայրկեանի մը մէջ ան-
յայտացան. քանի մը վայրկեան ջուրին տակ-
նուվրայութենէն յայտնի եղաւ որ անոնք ի-
րենց խորունկ բնակարանները գացած էին,
յետոյ ամէն բան անշարժ երեւոյթ մը առաւ
եւ լուսթիւնը նորէն տիրեց մեր շուրջը, ըն-
կուզենիննրու կակուղ կեղեւը կրծող բիվէր-
ներու (pivert) բարակ աղմուկովը միայն ընդ-
միջուած :

Այդ պահուն, արեւը ծառերուն վերեւը
բարձրացած, սաստիկ տաքութիւն մը կը ծո-
րէր : Լիլիէն յոգնած չէր տակաւին, ուստի
որոշեցինք կարճ պոռոյտ մը ընել : Շատ չան-
ցած հանդիպեցանք պղտիկ գետակի մը որ
ճամբանիս կը գոցէր եւ որուն վրայէն, Լի-
լիէն չէր կրնար անցնիլ : Հակառակ իր ընդ-
դիմութեան, բազուկներուն մէջը առի վայն.
անուշիկ արարածը հաղիւ տղու մը չափ ծանր
էր. թանկագին բեռս գրկած, հոսանքին մէջը
մտայ : Զուրը բարձր չէր եւ վտանգ չիկար
բնաւ, բայց գայլախաղներուն վրայ կը վրժ-
վրժար ան եւ Լիլիէն վախկոտ էր չափազանց :
Երկու թեւերովը պլլուեցաւ ճիտիս եւ իր
դէմքը ծածկեց ուսիս վրայ :

Դիմացի եզերքը հասանք, բայց ես պիտի
ուզէի աւելի հեռունները տանիլ վայն այսպէս,
այնչափ հաճոյք կը զգայի կորովի կուրծքիս
վրայ սեղմելով ծաղկահասակ աղջկան զաղ-
փաղփուն այդ մարմնիկը : Բայց Լիլիէն ինք-
զինքը քաջեց ազատեց բազուկներուն մէջէն.
մտահոգ նայուածք մը պտտցուց իր չորս բո-
լորը եւ քանի մը վայրկեան անխօս մնաց :
Յետոյ փափաք յայտնեց կարաւանին մօտ վե-
րադառնալու :

Հիմակուրէն բաժնուիլ, ինչ չուտ : Վե-
րադառնալ գաղթականներուն հսկողութեան
տակ, ա'լ չի կրնալ խօսիլ սիրոյս վրայ, ա'լ
չի համարձակիլ խանդակաթ նայուածքս ու-
զածիս պէս յառել իր այնքան սիրասուն աչ-
քերուն վրայ, ես որ այնքան հաճոյքներ էի
երազած առտուանցով, մենաւոր մեր այս
պտոյտին եւ ճամբորդութեան հոգերէն ու
աշխատանքէն գողցուած այդ մէկ քանի մա-

մերուն համար : Դէմքս անանկ ցաւագին յու-
սավրիպում մը արտայայտեց որ, Լիլիէն զըզ-
ջաց իր անվստահութեան յախուռն շարժումին
վրայ :

— Զէ', ըսաւ, ես գեռ իրմէն բան մը չի
խնդրած : Զի դառնանք, կանուխ է տակա-
ւին : Սա ծառերուն տակ ընենք մեր նախա-
ճաշը եւ սպասենք որ տաքը իջնայ քիչ մը :

Սիրտս անմիջապէս երանութիւնով լեց-
ուեցաւ : Մամուռին վրայ տարածեցի բերած
ուտելիքներս եւ խնջոյքնիս սկսաւ : Պարզուկ
խնջոյք մը, արդարեւ, որ քանի մը տեսակ
պտուղէ ու լճակին ջուրէն միայն կը բաղ-
կանար, բայց միեւնոյն ատեն շատ պատուա-
կան ու ակորժահամ խնջոյք մըն էր ան,
քանի որ քովս էր ու իմս էր միայն, ծաղ-
կատի այդ աղջիկը՝ որ հիմա բովանդակ տի-
եզերքս, ամբողջ մտածումս, համակ հոգիս,
բոլոր կեանքս էր եւ որուն աչքերուն մէջ՝
արդէն իսկ հոգեզմայլօրէն կըսկսէի կարդալ
սէրը՝ որուն կը ջանար դիմադրել տակաւին
եւ որուն սակայն շատ մօտ էր անձնատուր
ըլլալու :

Լիլիէն իր բոլոր զուարթութեան, աշխու-
ժութեան ու հմայքին տիրացեր էր նորէն :
Մեր շուրջը նիրհող բնութեան ամենաջնջին
պատահարները դարմացում մը ու սքանչա-
ցում կը պատճառէին անոր. ամէն բան ան-
վերջանալի հարցումներու առարկայ կը դառ-
նար իրեն համար եւ ամէն բան կը շահագրգ-
ռէր զինքը, իբր թէ ամէն բան նոր տեսած
ըլլար : Զրչունները որոնցմէ հեռացած էինք
քիչ մը, լճակին մակերեսին վրայ վերսկսած
էին իրենց խաղերը. խելացի անասունները,
իրենց հրաշալի բնազդով հասկցած ըլլա-
լով որ վախնալու բան մը չունէին մենէ,
կատարեալ վստահութիւնով իրենց զբօսանք-
ներուն ու աշխատանքներուն կուտային ի-
րենք զիրենք եւ լողալով մինչեւ դերթէ մեր
ոտքերուն մօտ կաւգային :

Սակայն տաքութիւնը անտանելի էր. տե-
րեւներու խիտ կամարէն թափանցելով եկած
էր չրջապնդել մեզի, ծանր ու դժուարաշն-
չելի օդի չրջանակով մը՝ որ բացուած միլիո-
նաւոր ծաղիկներու եւ հանդարտ ջուրին վրայ

ծփացող ջրային բոյսերու վերամբարձ, սաստիկ անուշահոտութիւններովը ու բուռն արտաշնչութիւններովը ծանրաբեռնուած էր:

Լիլիէն, ճաշին վերջաւորութեանը ատեն ա'լ բնաւ չի խօսեցաւ. դիտեցի որ իր աչքերը կը մթագնէին և իր շուրջը տարտամ ու անմըտած նայուածքներ կ'արձակէին: Նորատի աղջիկը քիչ մը ատեն պայքարեցաւ իր կամքէն աւելի զօրաւոր թմրութեան մը դէմ: Յետոյ, ետի ծռեցաւ, գլուխը կը լնցուց ասն ուռնիին՝ որուն տերեւները կը պաշտպանէին մեղի արեւին սաստիկ տաքութեանը դէմ, և խորունկ քունով մը քնայաւ: Իր այնքան նրբին, այնքան փափկանոր, այնքան պայծառադէմ, ճերմակ, խարսեալ ու պաշտելի գլուխը, այդ պահուն վստահութեան ու երանութեան անանկ անթերի արտայայտութիւն մը ունէր, իր խաղաղիկ դիմագիծերը խիղճի անանկ կատարեալ հանգստութիւն մը կը ցոլացնէին, անուշիկ զաւակը իմ քովս եղած ստեն այնչափ շուտ կը մոռնար իր բնաւ անհետացած ցաւերը, տաժանելի ճամբորդութեան յոգնութիւնները ու իր գլուխին վրայ թերեւ թեւածող վտանգները, որ իր կուսական քունը դիտած պահուս, ճշմարիտ յուզումով մը համակուեցայ: Նստած էի իր քովը, հրացանը ծռնկեցուս մէջ, գլուխս ափերուս մէջ, և կատարելապէս անշարժ, վախճալով որ կը խռովի իր հանգիստը: Այս հսկումին ատենը ինչչափ մխիթարական մտածումներ, ինչչափ երջանկութեան ու խաղաղութեան հեռապատկերներ խուժեցին սիրտս... Քիչ ատեն անցած էր դեռ անկէց ի վեր, բայց արդէն իսկ կ'երեւակայէի որ անտառի մը կեդրոնը, անհուն ու վտանգաւոր անապատի մը մէջ մոլորած ման գալու վրայ չէինք այլ ևս... Կը տեսնայի իմ ձեռքերովս իսկ կառուցուած նորաշէն անակ մը և Աստուծոյ օրհնութիւններովը ծանրաբեռնուած, բարձաւած տնկավայրեր: Լիլիէնի հայրը զիս իր զաւակը կը կոչէր, խարսեալ ու վարդազոյն, չէնչոյ ու անառակ մանկիկներ մեղի կը նայէին իրենց հրեշտակի նայուածքներով, և երկինք կը բացուէր...

Լիլիէն, երեքայ քունին մէջէն և իր շրթութունքը թրթռացին.

— Ռալֆ, մըմնջեց:

— Հոս եմ, հողիս:

— Ռալֆ, պիտի պաշտպանէք զիս, պիտի ազատէք զիս, չէ՞:

Անորոշ աղագային տեսիլքը, նոյն իսկ քունին մէջ, կը յաճախէր պաշտելի արարածին միտքը:

— Այո՛, Լիլիէն, պատասխանեցի իրեն: Մի՛ վախնաք, երբեք պիտի չի բաժնուիմ ձեռնէ, միշտ պիտի պաշտպանեմ ձեզի և դեռ շատ երջանիկ օրեր պիտի վայելէք:

Ատոր վրայ, Լիլիէն արթնցաւ բոլորովին:

— Օհ, Ռալֆ, ցաւալի երազ մը տեսայ: Հայրս մեռած էր, և ես միսմինակ էի աս աշխարհիս վրայ, և վախէս ու անձկութենէս ես ալ մեռնելու վրայ էի:

— Մի՛ վախնաք անուշիկս: Հարուստ չեմ թէ և, բայց սէրս ու քաջութիւնս կը բաւեն ձեզ պաշտպանելու համար և որչափ ատեն որ Ռալֆ ողջ ըլլայ, դուք մինակ պիտի չըլլաք աս աշխարհիս վրայ: Եւ եթէ կ'ուզէք, Լիլիէն, եթէ ինծի համար ձեր մէջ կը կրէք մէկ պզտիկ մասը այն անսահման խանդաղատանքին զոր դուք ինձ ներշնչեցիք, ոտքի ելէք և ինծի եկէք: Այսօր իսկ կուզեմ տալ այն խոստումը որ մեղի պիտի կապէ առ յաւէտ: Այսօրուէն անդին իմ կինս պիտի ըլլաք:

— Ինչպէ՞ս

— Կ'ընդունի՞ք:

— Կ'ընդունիմ, որովհետեւ կը սիրեմ ձեզի, Ռալֆ, և ալ չեմ կրնար մինակ ապրիլ:

— Ոտքի ելէք և ինծի եկէք ուրեմն:

Երկու ժամ վերջը վերադարձած էինք մեր բանակած վայրը՝ ուր արդէն իսկ կը սկսէին անհանգիստ ըլլալ մեր բացակայութեան համար: Դաղթականներէն ոմանք մեզ փնտռելու դացած էին և վրդոված կը վերադառնային: Յորեկուսն տաքութիւնը կսկսէր իջնալ. արեւը հորիզոնէն վար իջած էր արդէն. Լիլիէն քնացած էր գրեթէ ամբողջ յետմիջօրէն:

Նշանաւոր Մօրքուր Էթքինսի ու Մօրքուր Կրօզվընըրին յանձնեցի, և ես բանակաւորին ամէն կողմը պտըտեցայ խնդրելու համար

ընկերակիցներէս որ, իրիկուան ընթրիքէն վերջը տեղ մը հաւաքուին: Ծերուկն Սմիթ մասնաւոր գաղտնաւանդութեան մը առարկայ եղաւ որուն մեծ լրջութիւնով մտիկ ւրաւ: Յետոյ ամբողջ կարաւանին մէջ անհուն տակնուվրայութիւն մը տիրեց: Մեր միօրինակ կեանքին մէջ պատահարները շատ ցանցառ էին, եւ աւելի որսական ու պատերազմական պատահարներու էր որ կըսպասէինք, որով մեծաւորին կարեւոր ու անակնկալ բանի մը յայտարար կողմ, մեծապէս կը սատարէր ամէնուն հետաքրքրութիւնը արթնցնելու: Շիտակը ըսելու համար, մարդերէս շատերը կը կասկածէին խնդիրին ինչ ըլլալը, եւ իրիկուան, երբ առաջին լուսաւորները սկսան վառուիլ, տեսայ որ անոնք վախճաններէն դուրս կուգային, սովորականէն աւելի խնամուած ու կոկիկ արդուզարդերով, մասնաւորապէս մաքրուած, չփուած զէնքերով եւ հպարտ ու ցնծուն երեւոյթով:

Սմիթ ինք ալ ներկայացաւ, անապատին մէջ բազմաթիւ թափառայածութիւններէն մաշած իր հագուստներուն մէջը՝ ծանրաբարոյ ու համարձակ երեւոյթով մը: Գալով Լիլիէնի, երեք չի կրցայ գիտնալ թէ, զինքը սիրող երկու պատուական այդ կիները, ինտո՞ր կրցան յանկարծական կերպով պատրաստել ու յարմարցնել ձերմակ արդուզարդ մը, որուն մէջ հարիւր անգամ աւելի աղուոր, ու ծաղիկէ մը հարիւր անգամ աւելի անքիծ կ'երեւար ան: Իսկ ես, աւաղ, որ ճամբայ ելած ատենս, ամուսնութենէ զատ ամէն բանի կըսպասէի, հագած էի անվերջ ձիաւարումներու ու գիշերային հսկումներու ատեն հինցած հարիւրապետի համազգեստս, զոր մեր սեւամորթները, կէս օրէն վերջը ամբողջ աշխատած էին նուազ ողորմելի վիճակի մը բերելու համար:

Լիլիէն, Սմիթ ու ես, հասանք համախըմբումին կեդրոնը ու խանդավառ ծափողջոյններ գիմաւորեցին մեզի: Անոնք կ'ուղղուէին մանաւանդ «Թուչնիկ»ին՝ որուն շրորհը ու հմայքը, իրաւցնէ զմայլելի էին:

Խոր լուսութիւն մը տիրեց, եւ ես խօսք առի, մինչդեռ Լիլիէն իր ձերմակ ձեռքերէն

մէկը ձեռքիս մէջը դրած, տերեւի մը պէս կը սարսուար:

— Պարոնն'ը, խնդրեմ վկայ եղէք: Այս դեռատի աղջիկը, որ քովս ոտքի կեցած է, ձեր ներկայութեանը կինս կը կոչեմ: Միտքերնիդ պահեցէ՛ք ինչ որ կը լսէք հոս, եւ կրկնեցէ՛ք զայն արդարութեան առջեւ, օրէնքին առջեւ, մարդերուն առջեւ եւ Աստուծոյ առջեւ. ըսէք զայն ամէն անոնց որոնք հարցունեն ձեզ, ըլլայ արեւելեան՝ ըլլայ արեւմտեան կողմերէն աշխարհիս:

— Վկայ ենք: Շատ ապրիք երկուքդ ալ: Հուրբա՛, պատասխանեց միաձայն, ոսկեխոյզներու ամբոխը:

Ծերուկ Սմիթ սովորական հարցումները ըրաւ.

— Լիլիէն Մօրրիս, ձեր հաւանութիւնովն է որ, մեծաւորը իր կինը կը կոչէ զձեզ:

— Այո՛, պատասխանեց ցած ձայնով:

— Մեծաւոր, հաւատարմութիւն եւ պաշտպանութիւն կը խոստանա՞ք Լիլիէն Մօրրիսին:

— Հաւատարմութիւն ու պաշտպանութիւն կը խոստանամ:

— Ուրեմն, կարաւանին իրը նախանդամը ունեցած իշխանութեանս իրաւունքով, մարգագետինի դարաւոր սովորութիւններու զօրութիւնով եւ պայմանով որ տեղերնիս հասնելուս պէս ձեր խոստումները կանոնաւոր թուղթերով պիտի վաւերացնել տաք պատկանեալ իշխանութիւններու առջեւ, կը յայտարարեմ որ, Աստուծոյ ու մեր եղբայրակիցներուն առջեւ օրինաւոր ամուսնութիւնով կապուած էք ալ: Հրապարակով երդում ըրէք որ այս ամուսնութիւնը պիտի կանոնաւորէք, անապատէն դուրս ելլալուս պէս:

— Կ'երդնում, պատասխանեց Լիլիէն:

— Կ'երդնում, պատասխանեցի հաստատ ձայնով մը:



— Աստուած երկար կեանք տայ ձեզի, եւ ձեր սիրոյն արժանի երջանկութիւն մը պարգեւէ:

Օրէնքով ամուսնացած էինք Աստուծոյ եւ մարդոց առջեւ:

(Շարունակելի)

Արսովաշէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐՄԻՆԻԱ Օրագրի



1881 Մարտ 20ի Կայս. Ուքրադով արտօնուած

Հնկերու թիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ինքի վրայ, եւ ՀՐԴ-էի, փոխԱդրոնիթեան ՂՏԱԵԳ-ներոն, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՍ- ոն ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌ-ԲՈՎ եւ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՏԻՈ- ԹԵԱՆ ԱՐԿԱՍՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵՂԻՆԵՐՈՒ եւ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կոտ- լուն դէմ:

10,666,667 *ფრანკ*
137,300,000 *კ*

գլուխ եւ մնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ արեկոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել

խան, Կոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօրիւք խան,

(753 P 02)

ԱՆՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵԻ ՈՒ ՅԳՏԱԿԱՐ

Մոյն հանրածանօթ պղբերին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնաբարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մանաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէո Աբէտի տաւրալուծած է զայն եւ թաշտէլէն ու Գանլըգավաքի ճարտարներէն գերազանցապէս լուազոյն դասած է, ստուգելով որ անոր ջրափափական աստիճանը ¹⁰ է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չի տար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, իշխեր ու տակառները հոն լցնուելով ու զմռսուելով:

110150, 012 002 015

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԷՆ ԳԵՐՆՈՒՐ ԵՆ ԱՆՈՐԳԵԼԻ ԸՆԱՎԸ ԴԱՍՏԱՄԱՄԻԾ ԵՆ ՏԵՍԵԼԵՍԻ

Տօքթ. Տաքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի,
Զէրրի, Սթէքուրի, Ավիլիանո, Մալի, Միրապէլ, Բանայօթ պէյ Պալիտիս, Բարաքօվսքի,
Բէնօվ, Մօրթման, Տէլասուտա Ֆայիդ փաշա եւ Սիմօնօք:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲՆՐԱ, Մեծ-Փողոց, Հայկախ կան, Թ. 7, — ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Եւեկային Նուրի Օսմանիէի գրան կից Թ. 21 խանութը:

Սոյն միտերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ ԱՐԾԱՔԻՇ ջուրէն շատ, Բա-
րձրակաւ ջուր: Դինըր շատ աժան են՝ ժողովրդեան դերամատոցի ըլլալու համար:
Փարէկոմէնը չի տար՝ գնեցէ: ԱՐԾԱՔԻՇ ջուրէն, եւ ինչպէս համով ու թեթեւ
պտտի գտնէ, որ վաճառարդ պիտի գործածէր ի այն պայտեհեմով:

ՀԱՅԻՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱ


ՕՍՏԱՆԵԱՆ ՇԱԲԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանոթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաթիսրոի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի քան ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները։ Ամրան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ձօն միջերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուններու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101։

18—30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սւնեկնայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅՅԵԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, սոփի ու սոփի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագ ոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՍԻՆԿԷՐԻ
ՄԱՍՆԱՎՃԱՐԱԳՈՐԾՆԵՐ

ԲԱՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը
2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊԱԼԱՏԱ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԻՆԿԷՐ

Չարշը Պօլու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ան.

Կասաբեալ երաւիաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՄ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակ)

ՊԱՏՈՒԱՆԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԻՔՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի (ի ԲԱՐՔԱԺԷՆ)

ԱՆԼԵԱՆՑԱ

Յովային ապահովագր. ԸՆԿ. (ի ձեռնով)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի. Կ. Պոլիս, Բոքսի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ՆՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան գեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳՂ ԻԵՐԷՆ—ՀՅԵՐԷՆ

Գ. ՆԱՐ-ՊԷՅԻ

Գին երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶՍ.ՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Դալաթիա Սեղբոս խան Թիւ 5

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏՈՒՆ

Զամմաֆնար. Թիւ 64

ԸՆԹԱՑԻ ԸՆԹԵՐՑ.—ԳՊՐՈՑԻ ԳԻՐԳԸ.
Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին.
ճոխ պատկերներով ու բազմազան նկարներով.
Կեդ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դահկ.
Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ չը ձրի կը
ստանան, 50 փարայ բօսթի ծախք ղրկելով.
Ուղղակի Գրատան գիւղերուն կ'աւելոր
գեղջ մը տրուի:

Վ. Յ. Յակոբեան Անգղ-Հայ Բառգիրքը
որ սպառելու վրայ է, միմիայն յիշեալ գրա-
տունը կը գտնուի. ուր գիւղերու են պէտք ու-
նեցողները:—գին 80 դրոյ:

Ամեն վճարում կանխիկ է:

4—10

Գ. Յ. ՅԵՐՐԱՏԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանանք վաճառականական պիտոյից,
սպազմական գործերու պատրաստութեան
հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ.

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն
մասամբ:

Մանրամասնութեանց համար գիւղ

Կ. Յ. ՏԷԻՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ ՀԱՆՐԱԳԻՏԱՆ

ԿԱՆ. 1904 տարւոյ.—Գ. Պաղատասարեանի
սոյն ընդարձակ Օրացոյցը որ երկարամեայ
կանոնաւոր հրատարակութեամբ ծանօթ է,
յառաջիկայ տարւոյն համար ի լոյս ընծայ-
ուած է ճոխ բովանդակութեամբ մը որ ամէն
կարգի ընթերցողներու համար օգտակար ու
չահեկան կը դարձնէ զայն: Գին 3 դրոյ: Հը-
րատարակուած է նաեւ համառօտը: Վա-
ճառման կեդրոնատեղի Յ. Մատթէոսեան
Թղթովաճառանոցը, Կ. Պոլիս:

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Փրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է

Պարզ լաթակազմ 3 դր.

Ընթիր լաթակազմ 5 »

ՈՍԿԵԶՕՄ ՓԱՌԱԿԱԶՄ 8 »

25 օրինակէն աւելի գնողներուն զոնացուցիչ գեղջ

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քոքավաճառներու մոլ : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

1904

34 X 15 սանթիմէր մեծութեամբ :
ՍԵՂԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ. Թուրքերէն,
Հայերէն, Փրանսերէն եւ Յունարէն
լեզուներով

Յուշատարին սկիզբը աւելցուած են
կարգ մը կարեւոր տեղեկութիւններ որք
անհրաժեշտ են ամէն դործի մարդոց :

Ընթիր եւ գեղեցիկ լաթակազմ

Գին 3 դր.

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց բո-
լոր Գրավաճառներու և Թղթավաճառ-
ներու մոլ :

Հրատարակիչ :

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

ՊԱՅՊԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

© 20. Զոմմաբերար, Կ. Պոլիս

Ամենանոյս մքեբ դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ ներկայ դպրոցական
չըջանի տոթիւ պատիւ ունի յայտարարել իր
բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած
անհրաժեշտ դիւրութիւններ գրեանական ամէն
յանձարարութիւն զոհացուցիչ պայմաննե-
րով կատարելու, ըստ որում իբր գրավա-
ճառական մեծ հաստատութիւն մը արտադ-
րած է վերջին տասը տարիներու մէջ դրպ-
րոցական նորանոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հին մեթոտներուն
մէջ :

Զերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գա-
ւառաց կրթական վարիչ մարմինները փու-
թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրատտնա ընծայած առաւե-
լութիւններն եւ ամէն բացադիկ պայմաններն :